



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ, Ա. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՅԵԼՈՎ  
ՆՈՐԹ ՅՈԼԻՎՈՒՄԻ ՆՈՐԱՅԱՍԱՏ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵԶ

**ՀԱՒԹՎԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՈՎ,  
ՀԱՒՏՋԻ ՎԵՄԻՆ ՎՐԱՅ ՃԻՆԵՑԵՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԱՉԱՆԸ**

Զրիստոսի այլակերպութեան տօնին առիթով, Նորթ Յոլիվուտի Յայց. Առաքելական եկեղեցին ու անոր ծխական համայնքը ապրեցան պատմական օր մը, ընդունելով թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի անդրանիկ այցելութիւնը: Արդարեւ, Առաջնորդ Սրբազնը Կիրակի, 19 Յուլիսին եկեղեցւոյ մէջ մատուցեց իր անդրանիկ Ս. Պատարագը եւ իր պատգամը փոխանցեց հաւատացեալ ժողովուրդին, ապա նաեւ ներկայ եղաւ եկեղեցւոյ կից սրահին մէջ կազմակերպուած ընդունելութեան:

Առաջնորդ Սրբազնին այցելութիւնը տեղի ունեցաւ ծխական շրջանի հոգեւոր մատակարար Գերա. S. Միւռոն Շ. Վրդ. Ազնիկեանի ու ծխական յանձնախումբին հրաւորվ, որոնք երկար աշխատանք տարած էին այս այցելութեան պատրաստութեան համար: Ս. Պատարագին, Ս. Սեղանին կը սպասարկէին Յայր Միւռոն եւ Արժ. S. Աշոտ Ջին. Գամպուրեան: Ներկայ էին Արժ. Տէր Խորեն Ջին. Պապօշեան, Ազգային Վարչութեան անդամներ, գլխաւորութեամբ Դոկտ. Կարօ Յակոբեանի, Ջալիֆորնիոյ նահանգային խորհրդարանի անդամ՝ Փոլ Գրիգորեան, Կեղրոնական Կոմիտէի, ՅՕՄի շրջանային վարչութեան ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Նորթ Յոլիվուտի «Բարգէն Միւնի» կոմիտեութեան, ՅՕՄի «Մեղրի» մասնաճիւղի եւ ծխական շրջաններու քոյր եկեղեցիներու հոգաբարձական կազմերու ներկայացուցիչներ, երեսփոխաններ, հիւրեր եւ խուռներամ հաւատացեալներ:

Իր պատգամ քարոզին մէջ, Սրբազն Յայրը գոհութիւն եւ փառք վերառաքեց Աստուծոյ, որ գեղեցիկ այս առիթը ընձեռեց, Նորթ Յոլիվուտի Յայց. Առաք. Նորահաստատ եկեղեցւոյ եւ ծխական համայնքին հետ Վարդապարի տօնին առթիւ աղօթակից ըլլալու: Առաջնորդ Սրբազնը մաղթեց որ Այլակերպութեան դեպքը կանխող Պետրոս Առաքեալի դաւանութիւնը, թէ՝ Զրիստոս «այդ հաւատքին» Վրայ պիտի կառուցէ իր

Եկեղեցին, կիրարկում գտնէ այս շրջանին մեջ եւս ու Եկեղեցին մնայ անշարժ ու անսասան: Նորթ Յոլիվուտի մեր սիրելի ժողովուրդը, քսաւ Սրբազնը, սրտեռանդն աղօթելու, համագործակցելու, զոհողութիւններ յանձն առնելու են, մանաւանդ հաւատքով կառուցելու են աղօթքի եւ լոյսի խորան սուրբ Եկեղեցին:

Ջրիստոսի Այլակերպութիւնը Թափօր լերան վրայ, նշեց Առաջնորդ Սրբազնը, «աղօթքի պահուն, Ջրիստոսի աստուածային բնութեան պայծառակերպ ու յայտնատես երեւումն էր»: Պետրոս, սքանչացած Մովսեսի ու Եղիայի միջեւ Ջրիստոսի պայծառատեսիլ երեւոյթով, կ'առաջարկէ երեք տաղաւար շինել ու հոն մնալ, Աստուծոյ մշտական լոյս ներկայութեան ապրիլը՝ երանութիւն ու երջանկութիւն նկատելով: «Ջրիստոսի Այլակերպութեան տօնին առթիւ, Նորթ Յոլիվուտի մեր հաւատացեալ ժողովուրդին մաղթանքս ու աղօթքս է, որ այսօր, մեզի առիթ ըլլայ ոչ միայն հոգիներու բարձունքին վրայ Ջրիստոսի պայծառատես լուսեղին դեմքը տեսնելու եւ հոգեղին օթեւաններու մեջ զԱստուած փառաւորելու, այլեւ՝ հաւատքով աշխատելու, յոյսով ծրագրելու եւ սիրով գործելու, որպեսզի Աստուծոյ փառքին ու մեր ժողովուրդի հոգեւոր մատակարարութեան, ծառայութեան եւ պայծառակերպութեան համար սրբատաշ Եկեղեցիի ծրագրումն ու կառուցումը մօտալուտ ապագային յաջողութեամբ իրագործուի»:

Առաջնորդ Սրբազնը խօսեցաւ նաեւ Վարդավառի տօնին ու անոր կապուած աւանդութեանց մասին, որոնք մեզի հասած են հնագոյն դարերէն, այս օրերէն, երբ տակաւին քրիստոնեութեան լոյսը չէր հասած Յայաստան: Ան նշեց, որ Վարդավառը Յայց. Առաքելական Եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն երրորդն է: Մեր հաւատոյ հայր Ս. Գրիգոր Լուսաւորիչ բոլորովին արմատախիլ չըրաւ նախաքրիստոնեական մեր աւանդութիւնները, որոնք մեր ազգային ինքնութեան եւ պատկանելիութեան դրոշմը կը կրէին ու նուիրուած էին Տիրի, Անահիտի, Աստղիկի եւ միւս չաստուածներուն, այլ անոնց քրիստոնեական տարագ եւ իմաստ տալով՝ նոր պարունակի մեջ դրաւ: Յին հայոց տօներէն էր գեղեցկութեան դիցուի Աստղիկի տօնը, որ վարդամատն կամ Վարդավառ կը կոչուէր. Ս. Գրիգոր Լուսաւորիչ այս տօնը միացուց Ջրիստոսի Այլակերպութեան իրաշալի դեպքին: Ահա թէ ինչու Այլակերպութեան տօնին, գեղեցկութեան խորհրդանիշ վարդերով կը զարդարեն սուրբ խորանը, իսկ կեանքի, սրբութեան եւ մաքրութեան խորհրդանիշ իրարու վրայ չուր կը սրսկեն:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հաւաքական խոստվանանք եւ հաղորդութիւն: Յատուկ աղօթք մատուցուեցաւ նաեւ »Պահապանիշ« աղօթքէն առաջ, երգուեցան «Կիլիկիա» եւ «Մեր Յայրենիք» մաղթերգները:

## **ՍԻՐՈՅ ՃԱԾ**

Յաւարտ սուրբ պատարագի, Եկեղեցւոյ կից սրահին մեջ, Եկեղեցասէր Տիկնանց Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն: Յանդիսավար Տիկ. Սուսա Մատարեան, ողջունելէ ետք պաշտօնական հիւրերն ու ներկաները, յաջորդաբար բեմ իրաւիրեց

Եկեղեցւոյ յանձնախումբի ատենապետ՝ Տիար Խաչիկ Թիթիգեանը, Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեանը եւ Եկեղեցւոյ հոգեւոր Մատակարար՝ Գերապ. Սիւռու Շ. Վրդ. Ազնիկեանը: Բոլոր խօսք առնողները շնորհաւորեցին Նորթ Յոլիվուտի նորահաստատ ծխական համայնքը, բարձր գնահատեցին տարրուող Եկեղեցանուեր եւ կազմակերպչական աշխատանքները եւ հաստատեցին կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը Նորթ Յոլիվուտի շրջանէն ներս Եկեղեցի եւ կազմակերպ համայնք ունենալու հրամայականին՝ շրջանէն ներս ապրող բազմահազար ընտանիքներու հոգեւոր կարիքները բաւարարելու եւ հայապահպանման աշխատանք ծառալելու համար: Անոնք յոյս յայտնեցին որ սկսուած դրական եւ ժողովրդային խանդավառ այս մթնոլորտը հաստատ քայլերով պիտի առաջնորդէ սեփական Եկեղեցի ունենալու երանական օրուան:

Գեղարուեստական բաժնով Օր. Մելինէ Յամբարձումեան հանդէս Եկաւ Վարդապարի տօնին նուիրուած փունջ մը երգերով:

Առաջնորդ Սրբազանը փակման իր խօսքին մէջ գնահատեց Եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Յայր Սուրբին, ծխական յանձնախումբին, Տիկնանց Միութեան նուիրեալ աշխատանքները: Վեր առաւ սարկաւագաց եւ դպրաց անդամ անդամուիիներու Եկեղեցանուեր ծառայութիւնը եւ առհասարակ շնորհաւորեց Նորթ Յոլիվուտի հայ համայնքը, քոյր միութիւններն ու կազմակերպութիւնները, որոնք նեցուկ եւ զօրավիզ կանգնած՝ յառաջ կը տանին Եկեղեցաշէն եւ աստուածահանոյ աշխատանքները: Սրբազան Յայրը կոչ ուղղեց, խօսքը գործի վերածելու եւ ստեղծուած խանդավառութեան գործնական օրինակ տալու նպատակաւ, ու այս առիթով հաստատեց հիմնադրամ մը՝ »Եկեղեցւոյ շինարարութեան Հիմնադրամ«: Ան ըսաւ, որ Ազգ. Առաջնորդարանը կը հանդիսանայ այս հիմնադրամին առաջին նուիրատուն: Սրբազան Յօր օրինակին հետեւեցան քոյր Եկեղեցիներու, միութիւններու եւ անհատներու նուիրատուութիւնները եւ գումարը հասաւ աւելի քան տասը հազար տոլարի:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք արտասանեց Սուրբ Պողոս Եկեղեցւոյ նուիրեալ Յովի՛ Յայր Նոյել Կորկիսի եւ զինք յուշանուերով մը պատուեց:

Քրիստոսի Այլակերպութիւնն ու հայոց Վարդապարի տօները, ոչ միայն վարդերով եւ վարդաջուրի սրսկումով, պատարագով եւ Եկեղեցական արարողութիւններով յիշատակուեցան, այլեւ առիթ Եղան վերակենդանացնելու ազգային մեր աւանդութիւնները եւ վերանորոգելու քրիստոնեական մեր Առաքելական լոյս հաւատքը, միաժամանակ ուխտելու անշեղ ու անյողդողդ քալելու մեր սրբազան նախնեաց հաւատքի ու մեծ երազի ճամբով:

Նշենք, որ Թեմիս «Նորթ Յոլիվուտի Յայր. Առաքելական Եկեղեցի» ծխական համայնքը պաշտօնապես հաստատուեցաւ 2009ի Յունուարին: Այսուհետեւ, ամեն Կիրակի, յետմիջօրէի ժամը 2ին 4, Ս. Պողոս Քաղուեական կաթոլիկ Եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ կը մատուցուի, Չորեքշաբթի երեկոները տեղի կ'ունենան Ս. Գրոց սերտողութեան հաւաքներ, իսկ Կիրակսօրեայ դպրոցը կ'ընդունի մասուկները:

## **PRELATE'S FIRST VISIT TO THE NORTH HOLLYWOOD PARISH**

### **EPISCOPAL DIVINE LITURGY AT THE NORTH HOLLYWOOD PARISH ON THE FEAST OF TRANSFIGURATION**

Sunday, July 19<sup>th</sup>, 2009 was a joyful day for the parishioners of the North Hollywood community as they welcomed H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on his first official visit to the parish. On that day, the Feast of the Transfiguration of our Lord was celebrated with Divine Liturgy celebrated by the Prelate, who also delivered the sermon and his well wishes to the community.

Assisting at the altar were parish pastor Very Rev. Fr. Muron Aznikian and pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian. Participating in the services were pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian, member of the ARF Central Committee, California State Assemblymember Paul Krekorian, Executive Council chair Dr. Garo Agopian and members, representatives of the ARS Regional Executive and members of community organizations.

At the start of his sermon the Prelate first and foremost gave thanks to God for granting the opportunity to celebrate the Feast of Transfiguration with the North Hollywood parish. Referencing the dialogue between Jesus Christ and Peter preceding His Transfiguration when Peter confessed Jesus as Christ, the Prelate called on the faithful to build their church on a rock, a strong foundation of unmovable and unshakeable faith, just as Jesus Christ built His church on the rock that was Peter's faith. Six days later on a mountain summit, Jesus was transfigured as the light of the glory of God shone upon Him, and His disciples knew that He was the Lord Himself as He possessed the glory that belongs to God alone. The Prelate expressed his wish that this celebration of the Feast of Transfiguration is a time for the faithful to behold the shining glory of our Lord and Savior and to work with faith, hope, and love for the establishment of a church to serve for the glory of God. The Prelate concluded by speaking on the history of Vartavar, which Armenians celebrated from pre-Christian times, and how St. Gregory the Illuminator combined pagan rituals with Christian feasts to preserve our traditions yet give new religious meaning and significance to them. Thus, on the Feast of Transfiguration, we retain the traditions associated with Vartavar such as decorating the altar with roses, which signifies beauty, and sprinkling water on each other, which signifies purity.

The service concluded with the singing of the Cilician and Armenian National Anthems.

The faithful then headed to the church social hall where a reception organized by the parish Ladies Auxiliary took place. Master of Ceremonies Mrs. Sona Madarian welcomed the guests and invited Very Rev Fr. Muron Aznikian, Dr. Garo Agopian, and parish council chair Mr. Khatchig Titizian to deliver their remarks, all three of whom commended the progress the parish has witnessed since its establishment at the start of the year, and expressed

hope for the parish to have its own church in the near future.

The guests also enjoyed a performance by Meline Hambartsumyan who presented traditional Vartavar songs.

In his message, the Prelate commended the commitment of the parish pastor, parish council, Ladies Auxiliary, altar servers and choir members, as well as all the community organizations that have supported and continue to support and contribute to the advancement of the parish. The Prelate then announced the establishment of a new fund to assist in the future construction of a church, stating that the Prelacy was making the first donation to the fund. Representatives of various Prelacy parishes, members of community organizations, and individuals alike followed suit and pledged their donations, resulting in over ten thousand dollars being raised.

The Prelate also thanked the pastor of St. Paul Assyrian-Chaldean Catholic Church, where the services take place, for accommodating the needs of the parish and presented him with a memento, thus bringing the reception to a close.